


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. նոյեմբերին /վերլուծություն/


2003թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 7030 գործարքներ, որոնց քանակը 2002թ. նոյեմբերի համեմատ աճել է 14.3%-ով, իսկ 2003թ. հոկտեմբերի համեմատ՝ նվազել 5.4%-ով:

2003թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների



ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.

2003թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը..



2003թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3137 օտարման գործարքների 89.1%-ը կազմել են առուվաճառքները, 10.1%-ը՝ նվիրատվությունները և 0.8%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի

47.8%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 48.0%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. նոյեմբերին, 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 15.2%-ով, իսկ 2003թ. հոկտեմբերի համեմատ՝ նվազել 4.7%-ով: 2003թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի 1325 առուվաճառքի գործարքների 66.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.2%-ով, իսկ 2002թ. նոյեմբերի համեմատ՝ աճել 9.5%-ով:

2003թ. նոյեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

/1 ԱՄՆ դոլարը 2003թ. նոյեմբերին համարժեք է 564.4 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. նոյեմբերին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		նոյեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2003թ.	նոյեմբեր 2002թ.
Կենտրոն	250.0-970.0	408.5	402.1	310.0
Արաբկիր	200.0-560.0	306.4	302.8	205.0
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	194.0	193.1	132.0
Նոր-Նորք	115.0-250.0	152.1	150.6	110.5
Ավան	120.0-190.0	152.3	150.1	95.4
Էրեբունի	120.0-300.0	164.3	159.5	118.0
Շենգավիթ	120.0-250.0	163.4	162.4	114.0
Դավթաշեն	130.0-260.0	195.8	191.7	106.0
Աջափնյակ	120.0-250.0	173.1	167.5	113.0
Սալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	159.6	157.5	104.5
Նուբարաշեն	65.0-100.0	70.5	70.1	50.0
Երևան	65.0-970.0	194.6	191.6	132.6

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. նոյեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.5%, իսկ տարեկան աճը 46.8% :

2003թ. նոյեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 444 բնակարաններ, որոնց քանակը հոկտեմբերի համեմատ նվազել է 2.6%-ով, իսկ 2002թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 6.2%-ով:

2003թ. նոյեմբերին ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			նոյեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2003թ.	նոյեմբեր 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.8	62.7	59.6
	Ապարան	18.0-40.0	27.4	27.4	25.7
	Թալին	18.0-40.0	25.2	25.2	22.4
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.8	54.7	52.7
	Մասիս	20.0-90.0	54.4	54.4	53.3
	Վեդի	20.0-45.0	31.7	31.7	29.1
	Արարատ	22.0-50.0	31.6	31.5	29.4
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	84.7	84.6	75.4
	Արմավիր	21.0-58.0	45.7	45.6	42.7
	Մևամոր	17.0-50.0	30.9	30.9	29.6
Գևարքունիք	Սևան	20.0-50.0	30.7	30.7	29.7
	Գավառ	20.0-50.0	30.5	30.4	29.2
	Մարտունի	18.0-38.0	29.7	29.7	28.4
	Վարդենիս	10.0-21.0	17.3	17.3	16.4
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	62.0	61.0	59.0
	Ստեփանավան	20.0-48.0	33.4	33.3	29.1
	Սպիտակ	17.0-40.0	24.1	24.1	22.8
	Այվերդի	15.0-40.0	25.6	25.6	24.3
	Տաշիր	15.0-28.0	19.4	19.4	18.2
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	84.2	84.1	77.3
	Նոր Հաճն	35.0-75.0	52.3	52.3	50.3
	Բյուրևան	15.0-45.0	35.2	35.2	34.0
	Եղվարդ	28.0-55.0	40.7	40.7	38.6
	Հրազդան	18.0-55.0	31.0	30.9	28.6
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.8	75.8	72.3
	Զարենցավան	13.0-55.0	31.1	31.1	29.2
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	71.9	71.8	62.4
	Արթիկ	17.0-45.0	25.3	25.3	24.2
	Մարալիկ	15.0-33.0	23.7	23.7	21.4
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.7	29.7	27.5
	Կապան	18.0-52.0	29.4	29.3	25.9
	Սիսիան	17.0-37.0	27.6	27.6	26.1
	Մևրի	18.0-40.0	25.2	25.2	22.8
	Քաջարան	13.0-30.0	18.5	18.5	16.7

Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.3	35.3	31.3
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.9	46.9	45.3
	Ջերմուկ	18.0-50.0	41.2	41.2	37.8
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.2	36.2	32.5
	Իջևան	23.0-60.0	40.4	40.4	39.4
	Բերդ	15.0-43.0	29.3	29.3	27.1
	Նոյեմբերյան	21.0-45.0	26.8	26.8	25.1

2003թ.նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի տների բնակարանների միջին գների ամսեկան էական աճ չի արձանագրվել (ամսեկան աճը կազմել է 0.1%), իսկ տարեկան աճը՝ 7.3% :

2003թ. նոյեմբերին մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 470 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 130, մյուս մարզերում միասին վերցրած՝ 340: 2002թ. նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 28.8%-ով, այդ թվում Երևան քաղաքում՝ 58.5%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 20.1%-ով: 2003թ. հոկտեմբերի համեմատ, առանձնատների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1.5%-ով, ընդ որում Երևանում՝ 32.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 6.8%-ով:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. նոյեմբերին անհատական բնակելի տների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003 թ. նոյեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		նոյեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2003թ.	նոյեմբեր 2002թ.
Կենտրոն	255.0-990.0	422.5	416.2	314.0
Սրբեկիչ	205.0-580.0	310.9	306.7	206.0
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	196.3	194.8	134.0
Նորք-Մարաշ	120.0-240.0	311.5	309.2	255.0
Ավան	125.0-200.0	151.5	150.9	113.5
Էրեբունի	130.0-320.0	162.6	160.4	120.0
Շենգավիթ	120.0-260.0	164.1	162.4	114.5
Դավթաշեն	140.0-260.0	194.3	192.5	109.5
Աջափնյակ	125.0-230.0	169.9	168.3	114.0
Մալաթիա-Սեբաստիա	125.0-250.0	158.8	157.4	115.0
Նուբարաշեն	65.0-110.0	73.4	73.1	55.0
Միջինը Երևանում	65.0-990.0	210.5	208.4	150.0

Կենտրոն համայնքի տվյալներում Հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. նոյեմբերին առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.0 %, իսկ տարեկան աճը՝ 40.3%:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. նոյեմբերին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			նոյեմբեր 2003թ.	հոկտեմբեր 2003թ.	նոյեմբեր 2002թ.
Արագածոտն	Աջտարակ	35.0-100.0	82.9	82.8	78.8
	Ապարան	20.0-55.0	38.8	38.8	35.7
	Թալին	15.0-40.0	28.1	28.1	25.6
Արարատ	Արտաշատ	28.0-85.0	61.9	61.9	59.6
	Մասիս	27.0-88.0	62.4	62.4	59.5
	Վեդի	25.0-60.0	36.3	36.3	34.6
	Արարատ	25.0-60.0	37.5	37.4	34.6
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	89.7	89.6	77.5
	Արմավիր	35.0-90.0	52.3	52.3	47.7
Գևարքունիք	Սևան	25.0-60.0	36.4	36.4	34.9
	Գավառ	25.0-65.0	39.9	39.9	37.7
	Մարտունի	20.0-55.0	33.9	33.9	31.9
	Վարդենիս	15.0-45.0	21.3	21.3	19.3
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	68.9	68.7	64.4
	Ստեփանավան	20.0-50.0	33.7	33.7	31.9
	Մալիտակ	17.0-50.0	24.1	24.1	23.7
	Ալավերդի	18.0-50.0	25.9	25.9	25.5
	Տաշիր	15.0-30.0	19.9	19.9	18.7
Կոտայք	Արույան	40.0-110.0	92.5	92.4	88.7
	Նոր Հաճն	35.0-80.0	54.2	54.2	52.2
	Բյուրևական	15.0-50.0	38.2	38.2	36.0
	Եղվարդ	23.0-70.0	47.3	47.3	44.5
	Հրազդան	25.0-65.0	40.1	40.0	37.3
	Ծաղկաձոր	45.0-110.0	85.2	85.2	83.7
	Չարենցավան	25.0-50.0	33.4	33.4	32.1
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	90.9	90.9	85.4
	Արթիկ	18.0-55.0	28.7	28.7	25.8
	Մարալիկ	15.0-45.0	23.9	23.9	22.6
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.7	31.6	30.2
	Կապան	25.0-55.0	31.1	31.1	28.6
	Միսիան	18.0-50.0	28.7	28.7	26.8
	Մերի	18.0-40.0	28.2	28.2	23.8
	Քաջարան	15.0-30.0	19.2	19.2	17.4
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	37.0	37.0	34.4
	Եղեգնաձոր	20.0-65.0	49.3	49.2	46.9
	Ջերմուկ	25.0-60.0	43.4	43.3	40.6
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.2	39.2	37.4
	Իջևան	30.0-70.0	41.2	41.2	39.5
	Բերդ	20.0-50.0	30.9	30.9	29.0
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.8	30.8	28.8

2003թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսեկան էական աճ չի արձանագրվել (ամսեկան աճը կազմել է 0.06%), իսկ տարեկան աճը 6.5%:

Ընդհանուր առմամբ, հանրապետությունում 2003թ. նոյեմբերին օտարվել են 232.78 հա /10.81 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 186.95 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում, 217.63 հա /9.76 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են առուվաճառքի, որից 177.98 հա գյուղատնտեսական նշանակության, 14.45 հա /0.78 հա Երևանում/, որից 8.98 հա գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ՝ նվիրատվության և 0.70 հա /0.26 հա Երևանում/ հողերի նկատմամբ՝ փոխանակման գործարքներ:

Առավել մեծ մակերեսով հողեր են վաճառվել Արարատի մարզում՝ 44.78 հա, որից 32.07 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 0.16 հա, Տավուշի մարզում:

Ստորև ներկայացվում է 2003թ. նոյեմբերին մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չեռական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	38	2.34	7	2.10	0	0.00	58	3.57	11	1.76
Արագածոտն	3	0.40	8	1.09	0	0.00	45	20.48	16	1.50	0	0.00
Արարատ	0	0.00	2	0.12	2	0.88	83	32.07	19	1.34	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	39	36.20	21	1.78	5	0.86
Գևարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	3	9.24	32	4.05	1	0.50
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	31	19.87	1	0.20	0	0.00
Կոտայք	7	5.25	15	1.30	0	0.00	74	31.48	43	4.53	2	0.45
Շիրակ	0	0.00	0	0.00	1	0.03	9	12.50	4	0.25	0	0.00
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	9	7.81	4	0.50	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	6	2.67	0	0.00	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	2	0.16	0	0.00
ԸՆԴԱՄԱՆՆԵՐ	10	5.65	63	4.85	10	3.01	299	172.32	200	17.88	19	3.57

2003թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են հողերի 603 առուվաճառքի գործարքներ, որից 309-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 292-ը՝ բնակավայրերի, 2-ը՝ արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ:

2003թ. նոյեմբերին հողերի առուվաճառքներից 57-ը՝ իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 22-ը՝ /0.88 հա/ Երևանում, իսկ 35-ը՝ /8.16 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 10 միավորը՝ /5.65 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական, 47-ը՝ /3.39 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/:

2003թ. նոյեմբերին հանրապետությունում վաճառվել են 2 միավոր /10.37 հա, Արարատի մարզում/ արդյունաբերական օբյեկտների հողեր, որից 1-ը՝ /10.0 հա/ վարձակալության իրավունքի վաճառք է:

2003թ. նոյեմբերին, հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 309 գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 10 և դատարանի վճռով 1 /վերջինս ստորև ներկայացված

աղյուսակում ընդգրկված չէ/ , որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	0.40	630.0	1937.0	1500.0	39	14.71	840.0	7600.0	2600.0
Ապարան						1	1.37	130.0	1150.0	340.0
Թային						5	4.41	200.0	1680.0	350.0
Ծաղկահովիտ								170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ						28	9.03	740.0	10000.0	2005.0
Մասիս						22	8.64	400.0	5600.0	1075.0
Վեդի						32	14.17	450.0	7200.0	1285.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						21	17.65	650.0	4650.0	1245.0
Բաղրամյան						4	8.55	130.0	1000.0	440.0
Վաղարշապատ						14	10.00	980.0	11150.0	2115.0
Գևարքունիքի մարզ										
Գավառ								420.0	1100.0	650.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Մարտունի						1	0.20	100.0	4000.0	550.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						2	9.04	60.0	1180.0	230.0
Լոռու մարզ										
Ալավերդի						7	3.19	360.0	5500.0	940.0
Գուգարք						2	0.47	500.0	6000.0	1450.0
Սպիտակ								500.0	3300.0	1045.0
Ստեփանավան						22	16.21	180.0	4000.0	345.0
Տաշիր								100.0	400.0	237.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	0.25	845.0	1130.0	987.0	17	6.93	520.0	10100.0	5700.0
Եղվարդ	5	5.00	314.0	314.0	314.0	49	19.33	380.0	6100.0	2660.0
Հրազդան						8	5.22	250.0	4000.0	740.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						6	6.87	550.0	760.0	685.0
Ամասիա						1	2.75	80.0	525.0	190.0
Անի						2	2.88	240.0	800.0	295.0
Աշոցք								60.0	210.0	130.0
Արթիկ								140.0	800.0	260.0
Սյունիքի մարզ										
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մևրի								400.0	4240.0	858.0
Սիսիան						9	7.81	90.0	1500.0	300.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	1.19	260.0	4000.0	1450.0
Վայք						2	1.48	120.0	3400.0	660.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	2000.0	460.0
Իջևան								530.0	4000.0	1050.0
Նոյեմբերյան								100.0	8340.0	700.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մտությունը կապված է հողերի տնադրությունից և հողատեսքերից:

2003թ. նոյեմբերին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 167 առուվաճառքի գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 25, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	8	10875.0	60.0	62.0	61.0	15	13430.0	120.0	3800.0	2190.0
Ապարան								120.0	670.0	310.0
Թալին						1	1520.0	78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ						4	2610.0	175.0	2460.0	650.0
Մասիս	2	1200.0	338.0	342.0	340.0	11	6720.0	270.0	3680.0	800.0
Վեդի						4	4020.0	115.0	1000.0	495.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						7	5708.0	180.0	2440.0	750.0
Բաղրամյան								120.0	280.0	200.0
Վաղարշապատ						14	12139.0	280.0	3700.0	1260.0
Գևարքունիքի մարզ										
Գավառ						2	1530.0	180.0	1000.0	520.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
Մարտունի						29	38040.0	120.0	320.0	225.0
Սևան						1	950.0	120.0	1000.0	250.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								78.0	440.0	200.0
Գուգարք						1	1980.0	78.0	3800.0	700.0
Սպիտակ								78.0	450.0	160.0
Ստեփանավան								78.0	340.0	140.0
Տաշիր								78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						19	18726.0	180.0	4300.0	1430.0
Եղվարդ	15	13000.0	90.0	305.0	233.0	24	26527.0	180.0	3670.0	1700.0
Հրազդան								180.0	4120.0	1300.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	2450.0	120.0	2500.0	325.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Անի								120.0	430.0	185.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Սյունիքի մարզ										
Գորիս						4	5000.0	78.0	670.0	380.0

Կապան								78.0	1000.0	410.0
Մերի								78.0	450.0	230.0
Սիսիան								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր								78.0	990.0	300.0
Վայք								78.0	1000.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								78.0	670.0	170.0
Իջևան					2	1580.0		78.0	1600.0	540.0
Նոյեմբերյան								78.0	670.0	210.0

2003թ. նոյեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 7 գործարքներ 3.70 հա մակերեսով, ընդ որում 3-ական Արարատի /0.95 հա/ և Շիրակի /2.21 հա/ և 1-ը /0.54հա/ Գևարքունիքի մարզերում:

2003թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 624 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.9%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 30.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2002թ. նոյեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 11.6%-ով, իսկ 2003թ. հոկտեմբերի համեմատ՝ 3.0%-ով:

2003թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 41 բնակարանների, 13 բնակելի տների, 137 հասարակական, 9 արտադրական նշանակության օբյեկտների, 423 հողերի և 1 ավտոտնակի վարձակալության գործարքներ:

2003թ. նոյեմբերին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 34 վարձակալության գործարքների քանակները, 2002թ. նոյեմբերի համեմատ նվազել են 60.9%, իսկ 2003թ. հոկտեմբերի համեմատ՝ 26.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. նոյեմբերին հանրապետությունում վարձակալվել են 861.55 հա ընդհանուր մակերեսով հողեր /5.38 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 795.28 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության /2.50 հա նախկինում պահուստային/, 3.65 հա բնակավայրերի, 55.25 հա արդյունաբերական օբյեկտների, 2.00 հա անտառային հողեր: Առավել մն մակերեսով հողեր են վարձակալվել Գևարքունիքի մարզում՝ 306.16 հա, որից 306.13 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ Վայոց Ձորի մարզում 8.49 հա, , որից 8.23 հա գյուղատնտեսական նշանակության:

Ստորև ներկայացվում է 2003թ. նոյեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	14	71.74
Արարատ	0	0.00	13	131.71
Արմավիր	0	0.00	109	39.68
Գևարքունիք	0	0.00	35	306.13
Լոռի	0	0.00	8	27.80
Կոտայք	0	0.00	28	62.08
Շիրակ	0	0.00	26	76.21

Սյունիք	0	0.00	3	24.00
Վայոց Ձոր	0	0.00	6	8.23
Տավուշ	0	0.00	10	47.70
Ընդամենը	0	0.00	252	795.28

2003թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 553 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.9%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. հոկտեմբերի համեմատ աճել է 5.1%-ով, իսկ 2002թ. նոյեմբերի համեմատ՝ 53.2%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 24.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /32.5%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.0%/, առանձնատների /10.3%/ և հողերի /40.7%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 184 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. նոյեմբերի համեմատ աճել է 27.8%-ով, իսկ 2003թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 19.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 217.29 հա /3.50 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 213.17 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում 111.11 հա գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.22 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, Վայոց Ձորի մարզում:

2003թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/, համապատասխանաբար, 42 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.7%:

2003թ. հոկտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 4.5%-ով, իսկ 2002թ. նոյեմբերի համեմատ՝ 35.3%-ով: 2003թ. նոյեմբերին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 60.9%:

2003թ. նոյեմբերին, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 974 գործարքներ, որոնց քանակը 2003թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 6.3%-ով, իսկ 2002թ. նոյեմբերի համեմատ՝ 10.6%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.9%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /46.7%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն